


Հիւսիսոսեան հեղինակութեան կը վերաբե-
րի: Որով

Ա. Հարկ է նախ հաւաքել ամբողջ ստորյգ
տարբերութիւնները, զոր դիտին և հայն ու-
նին, Աստուածաշնչի բնագրին այլ ամէն
վկայից հետ համեմատութեամբ:

Բ. Եթէ դիտին և հայն մի և նոյն ըն-
թերցուածն ունին, ընդդէմ բոլոր վկայից,
այն ատեն լիուշի հաւանակամութեամբ Հիւ-
սիսոսեան ընթերցուած մը կ'ունենանք:

Խոնքր. Բազմ.



ԱԿԵԱՐԿ ՄԸ

ԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՈՅ: ՓՈՐՄՈՅ

ԵՒ ԼԵՈՒՍՐԵՅԱՆ ՀԱՆՌԻՍՏԻՑ ԱՐԱՏ

Ի ՌԵՔԱՆԱԿԻ

«Մ ետ է նա, անհուն, սարսափելի կեր-
պով... Երևակայեցէք որ Մճոյի² և Մայ³
ի միտոն այն վիժմարի հսկային ոտքին
մկկ մասն ըլլան. և զեռ 21 տարեկան է նա»:

Այսպէս կը գրէր Պետրոս ձիորտանի⁴
1819ին՝ Յակոբ Լէոփարտիի մասին:

Արդ ո՞վ և ո՞ր ծնաւ և ինչպէս սնաւ

1. Հմուտ բանասիրիս ոչ այնչափ ցարէ 'ի
մէջ բերած ապացոյցք՝ որչափ մի այլ նոր
փաստ, յորում հայ և զփոխ թարգմանութիւնք
զարեհալ կը զուգընթեան և կ'ապացուցանեն
իրենց մէջ սերտ աղերս մը, հակառակ գրեթէ
ամէն ձեռագրաց և թարգմանութեանց, կը ստի-
պեն զմեզ նոյնը խորհել: Ար խոտտանանք պար-
զել Բազմավեպին յաւրոր պարկաց մէջ, այդ
զոնէ նորագիւտ համարեալ փաստը՝ 'ի նպատ
վերոյեղեալ յօլուածոյն ենթադրութեան:

1. Նշանաւոր բանաստեղծ Իսապօղի: 1754-
1828:

2. Միրանաւոր հռոմայեցի և հուսկաւոր
լեզուագէտ: և գրադարանապետ Վասիկանի:

այս զարհուրելի հսկայն: Խօսեղըննք զնոյն
ինքն Լէոբարտի՝ առ կոմսն Գարլո Բէբօրի:

«Ինչան զիս, կ'ըռէ նա, կոմսն Մոնալ-
տոյ Լէոբարտի և մարքիզուհին Ատէլայիտէ
Անդշի, երկուքն ալ Ռեքանաղից, ի 29
յունիսի 1798ին՝ ի Ռեքանաղի: Միշտ
հայրենիացս մէջ օպրեցայ մինչև 24 տա-
րեկան հասակիս: Իրբև վարժապետ՝ ունե-
ցայ միայն երկու մանկավարժներ՝ երկուքն
ալ կղերական, որք հօրս տանը մէջ կը կե-
նային՝ իմ՝ զաստիարակութեանս համար,
մինչև 14 տարեկան հասակս. այնուհետև
հօրս հարուստ գրատունը, վասն զի շատ սիրող
էի զպրութեանց, իմ՝ զարգացմանս կարևոր
ծառայութիւն մատոյց: Այս գրատուն մէջ ան-
ցուցի կենացս մեծագոյն մասը, մինչև և որ-
չափ որ ներքց առողջութիւնս՝ որ խանգա-
րուած էր ուսումներէս, զորս սկսայ 20 տա-
րեկան հասակէս՝ անկախ ի վարժապետաց,
և շարունակեցի յետոյ միշտ առանց հանգրս-
տեան, միակ զբաղումն ընելով ինձ ուսումը:
Սորուցայ առանց վարժապետի յունարէն
լեզուն, և ինքզինքս տալով լեզուագիտական
ջանից՝ եօթն տարի շարունակեցի նոյն կըր-
թութեան մէջ. մինչև որ տեսութիւնս փա-
սուցեալ, և ստիպուելով ամբողջ տարի մը
(1819) առանց ընթերցման անցընել, սկսայ
մտածել. որով բնականաբար սէր կապեցի
իմաստասիրութեան. և այնուհետև սա և
զեղեցիկ գրականութիւն՝ միակ առարկայ զար-
ձան աշխատութեանցս»:

Ահաւասիկ համառօտիւ Լէոփարտիի կե-
նաց նկարագիրը, որ շուրկ է դէպքերէ և
փոփոխութիւններէ: Բայց իւր հոգեկան կե-
նաց վրայ՝ կարելի է գրել ստուար հատոր
մը, պատմութիւն այն հոգւոյն՝ զոր նա կ'ե-
րևակայէր:

Ազնուական, բարեկիրթ և բարեպաշտ
ընտանեաց զաւակ, ծնած լերան մը գագա-
թը, հայրական և եղբայրական գորովանք,
երկինքը, աստղերը, ջրերէն ծագած լուս-
նակը և Ապենինեանց հեռաւոր կատարնե-
ներուն հոռւ մտնող արեգակը՝ իւր առաջին
զգացումները և առաջին խնդրութիւնները ե-
զան: Պատրաստուցեալ նա կենաց՝ ինչպէս
հանդիսաւոր օրուան մը. և իւր առաջին

խօսքերն եղան օրհնութիւն մը առ մարդիկ և առ բնութիւն՝ որ կարծես զուրգուրալով կ'ընկերէին իրեն: Բայց իր յառաջացած հասակը և իր հանճարոյն առնափելի բարձրութիւնն՝ աւելի կարևոր համարել տալին իրեն թողաբացեաց մեծութիւնը՝ քան ծնողական բարութիւնը: այն թողաբացեաց՝ որոնք չի հասկնալով նորածնը աստեղ մեծութիւնը, մատանախը կ'ընէին միայն անոր անձին թերութիւնները, առանց զմայելու անոր դիմաց գեղեցկութեան և ազնուականութեան վրայ: Որուն համար դարձեացած կրպով կ'ըսէր նա իր « Յուշք » բերթուածին մէջ.

« եւ ոչ ասէր սիրտ թէ զճասակս իմ դալար
 դատասպարտեալ էի խամրիլ ի բնիկս յայս
 Ասած վայրի, ի խոսած գրոհի ամուպայ,
 Ոյր վասն ուսումս և գիտութիւնս եմ ամուռնք
 Օտար, և ստէպ պատճառք ծաղու, քըրքամաց,
 Որ աւելոց յիժէժ ելեալ ասեայ զիս-
 Ոչ առ խեղճալ, զի ոչ զօրէ զիս մեծ քամ զնձըմ-
 Գըլեմ զառուրս բարձի թողի սաս յամիւուլս,
 Զուրիկ ի սիրոյ և ի կնճաց, և բըռնի
 Թաշակոտացս ի սէջ լիծիմ գառն և զիգ-
 Ծ: զլաւութիւնս, ըզգութ յամծծէ մերկացեալ
 Արմամարհող կացուցանմս զիս մարդկանս.....

և որ սկսէր էր արդէն իւր երգած « Մե-
 նակեաց ծիտ » ին նման՝ առանձնական կեանք
 մը անցընել:

« Գոգ մեծակեաց և մըժղծի
 Ի հայրենի բնիկ երկրիս
 Անցուցանմս զառուրց իմոց ըզգարունս: »

և տանի օրերը՝ մինչ իւր հայրենակիցք առ-
 նական զգեստներով խումբ խումբ կը շրջա-
 գայէին, ինքը լարած իւր մեղամազիկ ճնարը՝
 կը մշշէր,

« Դսկ ես մեծիկ առողջ
 Ի մեկուսի ելեալ ի կողմս իժէ դաշտիմ
 Բժաւ ըզբօսամս և ըզխաղ՝
 Այլում թողում պատճի: ... »

Այս տողերը գրողը՝ անկարելի էր որ
 այլ ևս կարենար սպրել իր հայրենեաց մէջ,
 մանաւանդ որ ընտանեկան անդորրութիւնն
 ալ խռովեր էր իւր ազատական գաղափարաց
 համար. ուստի անիծեց այն ձիւնապատ լեռ,

ները, ծիծաղկոտ լուսինն ու բնութեան թաղոր
 ժմիտները և մարդիկը, զորս յառաջագոյն
 օրհնէր էր, և գնաց սպրիլ ուրիշ տեղ:

Արդէն զեռ 17 տարեկան հասակին՝ ա-
 նունը ամեն տեղ հռչակուեց էր իբրև լու-
 յունագետ և ընթաց. որով մեծ ընդունե-
 լութիւն գտաւ ի Հոռով. և զերմանացի ա-
 նուանի գիտնականն Նիպուր, առաջարկեց
 իրեն Գերմանիոյ մէջ իմաստասիրութեան
 ակոռ մը, մինչ իտալիա մերժած էր բնա-
 կան պատմութեան. բայց նա յանձն շտառ-
 հեռանալ հայրենիքէն: Հոռով եղած աստեղ
 ճննադատական մեծ գործ մը շարադրեց,
 Մայի և Չոհրապի հրատարակած Եստերեայ
 Քրոնիկոնիէ՝ հայկական թարգմանութեան
 վրայօր: Քիչ ժամանակ յետոյ թողուց
 զՀոռով և դարձաւ ի Ռեքանաղի՝ քանի մը
 ամսուան համար. և անկից վերջը թափա-
 րական կեանք մը անցուց, մերթ ի Պուր-
 նիա և ի Միլան, մերթ ի Փլորենտիա, մերթ
 դարձեալ ի Ռեքանաղի, մերթ ի Հոռով և
 մերթ ի Նափոլի:

Բայց ի ծնէ հիւանդոտ ըլլալով կազմը-
 ւածքով, և սպասեալ ևս իւր անխնջ աշ-
 խատութեամբք, այլ զեռ աւելի անձնական
 ցաւերով, և մէկ կողմանէ ալ իտալիոյ քա-
 ղաքական կացութեան պատճառած վշտերով,
 և որ աւելին է, հօրը և իւր մէջ՝ այս նկատ-
 մամբ եղած վիճարանութիւններէն և գտու-
 թիւններէն ձանձրացած, մինչ կը ստառ-
 պէր, միւս կողմանէ անբժշկելի և աննկա-
 րագրելի ծիրախոն սկսեք էր մրցիլ վերին-
 ներուն հետ և կիսակործան շէնքին խար-
 խուլ հիմերը քանդել քայքայել: Զգաց նա
 որ կեանքը այլ ևս չէր կրնար երկարել ի-

1 Annotazioni sopra la Cronaca d'Eusebio, pubblicata l'anno MDCCCXVIII in Milano dai Dottori Angelo Mai, e Giovanni Zohrab, scritte l'anno appresso dal C. G. Leopardi a un amico suo. Ռեքի նաև ըննադատական մը Ալգերի նոյն ժամանակ հրատարակած Քրոնիկոնիէ և Փլորենի երեք զրոց վրայօր, զորս կը յուսանք ծանօթացընել բանասիրաց Բագմակեպի յաշորդ պրակաց մէջ:

ընն համար: Կենաց բարդ շրջանակը՝ որ մեծ դժուարութեամբ կը շարժէր, ժամ ժամ կը կարծուէր թէ պիտի դադրէ ընդ միշտ: Բայց ինչ որ այլ ըլլայ, Լէոփարտի կենանքը վաղի մը չէր այլ ևս, ինչպէս ամէն մարդուցը, այլ ստուգիւ զահալթիսի մը դէպ ի մօհ:

Եւ Լէոփարտին ըզձափափաք կը սպասէր անոր. փափաք մը՝ որուն նման կ'ըսէ ինքը Լէոփարտին, ոչ ոք ոճնեցած է ւ Բայց որ այսօր ազնուական կ'երեւէր Լէոփարտի աչաց, մահը, դեռ կը գանգաղէր. և եղաւ իսկ կէտ: մը՝ որ նա ձանձրացած այլ եւս բնութենէն սպասելու անոր՝ մտաբերեց ուրիշ միջոցի գիմելու. բայց շուտով յաղթեց ստորանաց, և իւր մեծ հոգոյն մէջ՝ իր ցաւերէն գերագոյն համբերութիւն մը գտաւ:

Քանի մը օր ետքը ժանտախտը Լէոփարտի կիսամեծ ճրագը ի սպառ կը մաքրէր, և ամենայն մասամբ ուրիշ լուսագոյն գարու արծանաւոր Լէոփարտին՝ կ'իջնէր գերեզման 39 տարեկան ծագիկ հասակին:

Ռանիէրի, քան զոր ոչ ոք այնպէս մօտէն ճանչցաւ զԼէոփարտի, և որուն անունը միշտ կից պիտի ընթանայ նորա անուան հետ, կը սահմանէ զինքը աղբար, մարգաթէր, աւատաւան, մեծանն և թնկեղծ. մին է նա, կ'ըսէ ի մեծագոյն զրչաց, և (եթէ ուրիշ տեղ ծնած ըլլար) մին ի մեծագոյն մարդկանց որ երեւեցան վերջին ժամանակներս, ոչ միայն յիտայիս, այլ համօրէն Եւրոպիոյ մէջ: Մեծ՝ հրաշագործ և զրեթէ գերմարդկային հանճարովը. մեծ՝ անվերջանալի և զրեթէ անհաւատալի ջանիւքը, ամենաբարձր և անմասնելի բանաստեղծութեան և արձակ գրութեան համար, եղաւ նոյնպէս ամենամեծ և զիրին կերպով միակ իւր համեստութեան և բարուց անմեղութեան համար: Այլ թէ ինչպէս ոչ իւր հիւանդութիւնը և ոչ իւր պատարանքները կրցան բժշկուիլ, թող անանք միայն զարմանան, կ'ըսէ նոյն ինքն, որ մեծամեծ մարդիկները զատելու ատեն, չեն նայիր ոչ ժամանակաց, ոչ տեղեաց և ոչ մարմնոյ խառնուածոյն, և չեն կարող են թողրելու՝ թէ ինչ եղած պիտի ըլլային Ազգեջանոր, Կեօսար, Նարզէան, եթէ ծնած ըլլային Լէոփարտի հանգամանաց մէջ:

Եւ նա՝ որ այնչափ բարեպաշտութեամբ անցուցեր էր իւր մանկութիւնը հոգեւոր դաստիարակաց ձեռքին տակ, և որտայոյր կրօնական ոտանաւորներ ևս գրած և մերձ իսկ էր ընդունելու քահանայական վիճակը, ընկճուելով բարմադիմի ցաւոց ահագին բեռան տակ, առ ի չդոյժ բարոյական ուժոյ, ինկաւ այնպիսի տխուր և յուսահատ դիքքի մէջ, և այնպիսի էջեր գրեց՝ որուն նման և ոչ հեթանոսք մտաբերեցին ըսել: Մի կողմանէ հանճարոյն ահագին բարձրութիւնը՝ միւս կողմանէ ցաւոց ահագին խորութիւնը՝ զարձուցին հէք Լէոփարտին պուլը, և զինքը պրտեցին ի զառանցանս իր իմաստասիրական տեսութեանց. ուր փառքը, բարեբաստութիւն, առաքիտութիւն, նախախնամութիւն և հանդերձեալ կենանքը մարդկային աւխտար վիճակը սփոփելու պատճառաւ հնարուած ցնորքներ համարեցաւ. և այլ ևս զարձնէն լով աչքը երկիւքէն՝ որ իրեն համար պղնձեղէն պատուար մ'էր, սկսաւ կարդալ առ քնութիւն: Տիրուր վիճակ, որ սակայն գիտէ միայն արգահաաանաց և կարեկցութեան սրտածրմլիկ զգացումներ կորցել: Եւ այսպէս իւր անմահ փառաց վրայ այնպիսի տխուր ստուերած մը ձգեց՝ որ անջինջ պիտի մնայ ցորչափ իւր ցաւագին և յուսահատ քնարը հնչէ:

* *

Լէոփարտի կենաց վրայ համառօտ ակնարկ մը տալէն ետքը՝ անցնինք նկատելու զնա իբրև լեզուագէտ, բերթող և արձակագիր: Ինչպէս տեսանք վերագոյն, Լէոփարտի շունչեալ մեծամեծ վարժապետներ և ոչ ալ մեծամեծ վարժարաններ յաճախեց. մտաւ նա հօրը գրատունը, և իտալերէն աւ լատիներէն լեզուաց համառալէն ետքը սորունցաւ սքանչելապէս ինքն իրեն գաղղիերէն, սպաներէն, և անգլիերէն, և աստեցմէ զատ՝ որ ակելի զարմանալին է՝ յունարէն և եբրայեցերէն, և այս վերջնոյն մէջ իսկ այնչափ յատալ գնաց՝ որ սկսաւ մինչև վիճարանութիւններ ընել անգնանցի մի քանի գիտուն հրէից հետ: Իսկ իւր յունարենի ծայրացեալ հմտութիւնը զրեթէ անհաւատալի կը թուի:

Չի գոհանալով Բատուա տպուած Հին յու- նարէն ճիւղականութեամբ որ չէր ալ կարող լեցընել իւր անհամբիւր փափաքը, մէկդի ձգեց զայն, և մի առ մի սկսաւ կարգալ հօրը գրատան մէջ գտնուած բարբոսոտած Հին յոյն հեղինակները՝ գրիչ ի ձեռին. և քիչ ժամա- նակի մէջ այնչափ հմտութիւն դիզեց, մինչև զաղափարներն ալ, մտածութիւններն ալ սկսան յունանալ։ Չհաւատալու բան է կ'ըսէ, Ռա- նիւրի, անոր ընտանութիւնը յոյն լեզուի և այն գերմամարդկային հեղինակաց հետ։ Չայս միայն բաւական է ըսել՝ որ երբ Լէոփարտի կը հաճէր երբեմն չի ծածկել իւր հանճարին հրաշալիքները, կը խոստովանէր թէ աւելի յստակ և կենդանի ունի յոյն ըմբռնողու- թիւնը (conception) մտացը մէջ քան լա- տինականը և նոյն իսկ քան իտալականը։ Այս ընտանութեամբ հմայիչ քննադատա- կաններ գրեց յունական լատագոյն և յոսի գարուց տմէն հեղինակաց վրայ։ Եւ եթէ չըլլար, կ'ըսէ Ռանիւրի, բնածին Հիւանդու- թիւնը, տարածամ մահը, և գուցէ, խորհրդ- դաւոր զանազանութիւնը՝ որով այս երկու ատուածեղէն հանճարները նկատեցին տեւ- զերքը, տարակոյտ չի կայ որ նա կը հա-ւատարկը Պղատոնին։ Եւ Պղատոն, վերստին կենդանացած յիտալիա Լէոփարտիէ մը՝ նոր թուական մը կը բանար իտալական պարու- թեանց։

Յոյն աշխարհը լաւ ուսումնասիրել է ետքը՝ անցաւ ուսումնասիրել լատինականը. և 12 էն մինչև 26 տարեկան հասակին՝ լեզուա- գիտական այնպիսի գանձեր թափեց անթուե- լի թղթերու վրայ, որ առանց ուրիշ փոր- ձերու, կրնար իսկ երկիւղ ունենալ չի կա- րենալու միայնակ պատմել զանոնք։ Չար- մանալի է ընդարձակ և խոր հմտութեամբ՝ իւր ճաշակ հնոց նախապաշարունակց անուն գրածը։ Աւելի ևս զարմանահրաշ անհամար ծանօթութեանց և մեկնութեանց համար՝ իւ- բաբանչիւր յոյն հեղինակի վրայ՝ Պղատոնէն սկսեալ մինչև Թէոփի իմաստալը։ Իսկ իւր հաւաքած եկեղեցւոյ Յիսուս և հիւնգ հարց պատասխանները՝ զարմանալիութենէ վեր են, գորս և զայլս յանձնեց մեծներու ատեն մե- ծախոչակ գերմանացի Լուզովիկոս Տը Սիննէր

լեզուագիտին, որ բրոֆեսոր էր ի Փարիզ, որոց համառօտ՝ բայց ամենայն խնամքով բովանդակութիւն մը հրատարակեց նոյն բը- ֆեսորը։ Իւր միւս անտիպ ձեռագրեր կը պա- հուէին հայրենական գրատան մէջ՝ որոց մեծագոյն և կարևորագոյն մասը այս տարի Լէոփարտիի հարիւրամեկի տղթիւ հրատա- րակուեցան այլ և այլ անձերէ։

Յետ ուսումնասիրելու զյոյնս և զլատինս, և հարցնելու ցաւոց խորհրդաւոր պատճառը բոլոր Հին արևմտեց, վաղեց հատաւ միջին զարը՝ ուր այլ եւս ցաւը խորհուրդ մը չէր։ Տանդէ և իր որդին Շէքսբիւր պատասխանեցին վերջապէս իւր հարցման, և ցուցուցին իրեն տիեզերքը մամէ կերպարանաց տալ, որով տա ինքզինքը կը պարզէր։ Եւ այն ատեն Լէոփարտի մեքենացոյ տիեզերաց իւր սեփա- կան հանճարոյն առաջին տարրը, իւր երեւա- կայութիւնը, և երեւցաւ Մեծ բանաստեղծ։

Լէոփարտի ինքնին կը պարզէ մեզ իւր ոտանաւոր գրելու արուեստը. «Կենացս մէջ, կ'ըսէ, շատ քիչ և կարճ բանաստեղծութիւն- ներ գրեր եմ։ Գրելու ատենս միշտ հետեւած եմ ներշնչման մը կամ ախնի, որուն յան- կարծակի գալուն պէս՝ երկու վայրկեանի մէջ կ'աւարտէի ծրագիրը և բոլոր յօրինուածոյն մասունքը։ Յետ զայս ընդուն՝ սովորեմ միշտ սպասել՝ որ ուրիշ վայրկեան մ'ալ գայ խանդի. և երբ գայ (որ սովորաբար քանի մը ամիս ետքը կը պատահի) կը սկսեմ գրելու, և այնքան զանազանութեամբ, որ որ և իցէ բանաստեղծութիւն մը, թէպէտ և ա- մենակարճ՝ հազիւ երկու կամ երեք շա- բաթներու մէջ կրնամ աւարտել։ Այս է իմ մեթոտս, և եթէ ներշնչում չկգամ յիս, աւելի դիւրին է կոտէլ մը Զոր ցատեց- ցընել, քան սող իմ իմ ըզեղէս»։

Եւ այս ոճով յօրինեց նա իւր հրաշա- կիրաները. զեռ 18 ամեայ կը յօրինէր Երգե ի Պոսիդոն՝ զոր (և զայլս յետոյ յօրինած- ներէն) լեզուագէտ գերմանաց ստույգ յունս- կան երգեր համարեցան. 19 ամեայ Առ իտալիա, և 20 տարեկան՝ Տանդէի համար պատրաստուած արձանին վրայ ի Փոլորեն- տիա՝ անուան երգերը կը յօրինէր. իսկ իւր վերջին կենիտայ (Ginestra) ծաղկան

վրայ յօրինած ճիւղերունսն ըր. ուր պիտի կարենանք զանեկ արդի կամ լուսագոյն իսկ գորուց մէջ բան մը, որ ճիւղերունսն հրաշունչ աշխուժիս կամ գիտութեամբ կարենայ հետազոտել իսկ նմանիլ անոր:

Բայց, ահա, որ իւր երգերուն մեծագոյն մասը յուսահատութեան և ցաւոց ըլտեակարան մ'է. վասնզի ինչպէս ամէն բանի մէջ ցաւ կարողացեր էր, և ամենուրեք ցաւ երգած, ամէն բան ցաւով բացատրեց, և արքայութեան մեղեդիներով երգեց դժոխքը:

Կը գրէր նա յունարէն, լատիներէն և հին իտալերէն. և ինչպէս լեզուազէտ Գերմանացիք իւր մի բանի գեղօնները՝ (մին Աստի, և միւսն Աստի, և վերոյիշեալ ի Պոստիւմ երգը) հին և սոյոգ յունական երգեր համարած էին, կարծելով որ նա թարգմանած և ծանօտարիւններ դրած ըլլայ, այսպէս և Չէզարի սոյոգ իտալերէն լեզուի բնագիր կարծեց իւր յուն թարգմանած Մարտիրոստարիան տարբ Հարց գործը: Իտալերէն գրելու ատեն ընտրեց նա հին ոճը՝ ամէն բան յստակ և ազգու ըսելու. և ցըցուց՝ որ մեծ գրելը՝ պէտք է և կրնայ ըլլալ լեզուին արգար տէր և ոչ հարստահարեալ ծառայ: Բայց ոչ մի մարդկային լեզու, կ'ըսէ Ռանիէրի, չի հնազանդեցաւ անչի յօմարութեամբ ոչ մի մարդու, ինչպէս մեր լեզուն հնազանդեցաւ այս անմանիլի գրչին:.. Իւր ոճը ներկայացուց մի և նոյն ժամանակի մէջ տիեզերաց զանազանութիւնը, մուլտիպլի, և կատարելութիւնը. ըստ ամենայն ինչ այն ամէն ձեւերով՝ որով կրնային ըստիլ: Իւր ոճոյն կախարդիչ հմայքը կը կայանար կատարեալ յստակութեան և բառից կարգաւորութեան մէջ: Մահձոնի 1830 ին Լեոփարտի արձակը՝ իտալական արդի արձակ լեզուին գլուխ գործոց կը համարէր: Իւրացուցած էր նա ՉՉ դարուն ճարտարութիւնը, չորեքտասներորդին պարզութիւնը, և իր ոճոյն բուն և մասնաւոր էութիւնը՝ առած էր նախ Յոյներէն, որոնք քերական օրինակ են կատարելութեան, ապա իւր դարէն և յետոյ ինքն իրմէն՝ ուկից ամենէն առաջ պէտք է առնուլ: Եւ, հա-

կառակ իւր անվերջ ուսումնասիրութեանց, սովոր էր ըսել որ երբ գորղը գրելը ձեռք առնու՝ պէտք է մտնայ, որչափ որ կարելի է, թէ գրեց և գիտութիւն կան աշխարհիս մէջ, և պէտք է իւր մտաց պարզ և յստակ յղացումը յայտնէ:

* *

Ռեքանալի զարգարուած է յստից մինչեւ ցըրուի նոր հարսիման. Լեոփարտի բնակած տունը հարուստ գորգերու և դրօշակներու մէջ կը ծածանի. ամենայն փողոցը և տունը լինեն դրօշակներով, պսակներով և ծաղիկներով, որոց մէջ գլխաւոր տեղը կը բռնէ ճիւղին վերջին անգամ երգած Կենիստայ ծաղիկը: Բոլոր ճաղաքը կը ցնծայ նորօրինակ շարժմամբ. լուսավորութիւնը, հրախաղութիւնը, թատրոնը, երաժշտութիւնը, հանդէսը կը յաջորդեն միմեանց: Լեոփարտի նուիրուած ճաղաքագիտական պալատը արտաքոյ կարգի շքեղութեան մէջ է. որմերուն վրայ ծածանող թանկագին կերպասներն և վարագոյրները մեծախալելուց երևոյթ մը կու տան անոր: Ներս մտնողին ձախաղողը գետեղուած է հարիւրամեկին ի յիշատակ շինուած մահարձանը՝ Գարրաբայի մարմարով, որուն վրայ ոսկեգիր գրուածուած է հետեւեալ արձանագրութիւնը.

Ի ՔՍԱՆԵՐՈՒԻ ՄԵՆԵՐՈՒԻ ԱՌՈՒՐ ՅՈՒՆԵՍԻ

1898

ՅԱՐՔՈՒՆԻ ԱՅՍՐ Ի ՆՈՒՐԵՆԱՆ ՄԵՍԻ ԱՆՈՒԱՆ

ՀԱՄԱՄԵՐԵՑԱՆ ԻՏԱՒ ԵՒ ՕՏԱՐԻ

Ի ՅՕՆԵՆ ԶԼԱՐԻՐԵՄԵՆԱ

ՅԱՆՈՐԱՅ ԼԷՈՓԱՐՏԵԱՅ

ԱՆՁՈՒԿԱԿԱՆ ԷՆԶԱՄՈՐԸ ԵՒ ԱՆՅՈՒԻ

ՈՐ Ի ՀԱՐԵՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԷՆ

ԵՐԿԱՆ Ի ՆՈՒԿԱՍ ԱՆՄԱՀԱԿԱՆ

ԶԼՅՈՐԵՆԻՍ ԵՒ ՅՅԱԻ

Մահարձանին շուրջը կան Լեոփարտի բարեկամաց նկարներն՝ Անճելոյ Մայնէ սկսեալ մինչև Կլաստագոն:

Յեսու Գարտուչի՝ Իտալացոց արզի բա-
նասեղծն՝ նախագահ Լեոփարտեան Հանդի-
սից մասնատողովոյն՝ կը բանայ Հանդէսը
զեղեցիկ բանախօսութեամբ մը. ուր յետ
բացատրելու իմքուսած Հանդիսին պատճառն
ու մեծ նշանակութիւնը, «կու գամ, կ'ըսէ,
ի՛վ Ռեքնաագի, բերել թեզ Իտալիոյ ծերա-
կուտին ողջոյնը, և Հասարակաց կրթու-
թեան նախարարին աշնի գացցումները :
կու գամ բերել թեզ, Հովմայ՝ մեծին, և
Գալիլեոսն նորոգուած դիտութեան ողջոյնը.
Պրոնիայի՝ զիտնոյն, և Իոնսերիոսի հետ վե-
րածող օրինաց ողջոյնը. Փլորնսիոյ՝ գե-
ղեցիկն, և Տանդէի ամենաբարձր անուան
վէլ կենդանի եղող բանաստեղծութեան ող-
ջոյնը. երեք ողջոյններ՝ որք երեք օրհնու-
թիւններ և երեք թմեր են Իտալական փա-
ռաց, Իրաւունք, զիտութիւն և բանաստեղ-
ծութիւն, թեզ, Ռեքնաագի, և թեզի հետ՝
այս մեծ և դժբաղդ հոգւոյն, որուն ի մե-
ծարանս՝ բոլոր աշխարհ զթեզ կը պատուէ :

Բայց ինչո՞ւ դժբաղդ ըսի : Այսուհետև
Յակոբ Լեոփարտի այլակերպեալ է, ոչ է
նա այլ եւս մթին սիրահար մահու. նա՝ որ
այնչափ կրեց, և որուն աշխարհային ցաւը
չունեցաւ երբեք նման մը, ոչ աւելի ճշմա-
րիտ, ոչ աւելի մեծ և ոչ աւելի սուրբ. մին
է նա Հայրենեաց Հանճարներէն և ի դից և
կը քնակի մտածութեանց և պատմութեան
պայծառ բարձունքը, ուր և ուսկից կը ներ-
կայացընէ և կը պաշտպանէ զիտալիա...» :

Լեոփարտեան Հանդէսը սկսած են Յունիս
29 էն ի վեր, և պիտի տեսնն մինչև Սեպ-
տեմբեր 20 :

Յետ համառօտ ակնարկ մը տալու Լեո-
փարտեայ կենաց, գործոց և Հանդիսից վրայ,
կարծենք թէ անհաճոյ պիտի շանցնի լսել 19
ամեայ Լեոփարտիին՝ Իտալական քնարական
քերթովեան հետեւեալ Հրաշակերտը :

Հ. Ա. ՂԱՐԻՍԵԱՆ

ԱՌ ԻՏԱԼԻԱ*



Հայրենիք իմ, աճա պարիսպ և կամարք,
Ահաանիկ սիւնք և արծաթ ուսմայիք
Մերոց Մախմուդա աշտարակք,
Այլ չըրկիմ փառք ուրիք,
Ո՛չ դափմի, ոչ զրահ որով հարք մեր Սախմիք
Սպառազիծեալ էիմ : Աճճճ արդ այժմիկ
Մերկ ըզմակատըզ ցուցանես, մերկ ըզկուրծ :
Բա՛բէ, ո՛րքամ խոց և վէրք,
Ձի՛նչ երաշխեպ, զի՛նչ արիւմ, յո՛ր կերպարամ
Ձքեզ տեսանեմ, չըքմաղագիզ դու տեկիմ :
Օ՛մ դու երկիր, օ՛մ երկիր
Գողէ՛ք ասէ՛ք ո՛ր զգա յողորմիչ արկ պայմամ,
Եւ զժժժեղակ այժ՝ զի եմ ձեռք ի շըղթայս...
Մի՛նչև իմ մայպէս հերարծակ քողազուրկ
Նըստի՝ զետմի ճամբաթախիծ և լըքեալ,
Եւ թաքուցեալ զերեսս իւր
Ծըմզացմ ի մէ՛ջ ողբս առմու :
Լաց, իտալի, լաց, Իրաւունք եմ քեզ քաջ,
Ծըմնալըզ դու զի յաղթող
Լեցիս ազգաց ի քստիս զըճէ և յաշող :
Թ՛ էիմ աչկունքըզ զո՞ք աղբերք մըշտաճոս,
Ձօրէիմ ոչ արտասուք
Մէտ ի կըշիւ գալ կորսանացը և վճասուց,
Տիկի՛նք երբե՛մ՝ արդ աղախեմիզ ապաշուք :
Ո՞՞ զթէ՛զ զըրէ կամ խօսի,
Եւ յուշ անծալ զամցեալ պարծանսըզ պայծառ
Չասիցէ՛. Մեծ եղև երբե՛մ՝ արդ ոչ ևս,
Իսկ առ իսէ՛. Ո՛րք վաղեմիմ արութիւմ,
Ո՛րք զթէ՛զ կամ յո՞՞ կորով և կուտ պըմղութիւմ.
Ո՞՞ զքոյլ ի քէ՛մ թափեաց սուր.
Ո՛՞ջ քո մատնիչ, ո՛ր դու իշխեաց զի՛նչ ճըմարք
Գամ ո՛ր այժ ցուռն ուժգմութիւմ
Ըզծիրամիղ կապտել և զիւրազ ոսկհոռու :
Ծ՛րք և զիւրո՞ք զլորեցար
Ի վի՛մ քարծամց ամտի՝ ստորիմս յայս յատակ.
Ձի՛ք ի քոյրոց ոք քեզ պաշտպամ, վերամարտ-
չապ՝ այսր ըզգէ՛նս, ըզգէ՛նս անէք այսր աղէ :
Մէ՛ն միայնով մարտեայց, միայլ և ամկայց :
Տացե՛մ յերկիւք, զի՛ ճըրճեմ

* Այս և նախընթաց մի քանի տողերը հա-
նած ենք՝ մեր մի քանի ամիս յառաջ Լեոփար-
տեան Հանդիսից աւթիւ Թարգմանած և քնարաւ
Հանդերձ Հրատարակած Հատորնոյի Գերբարձր
Յակոբայ Լեոփարտեայ զըքուկէն. որ կը վա-
ճառուի ի նպատակ Հայ որբանոցին որ է Ռե-
քանագի : Գին 1 Քր. .